

57. ՖԱՐԽԻԿ

Կէղի, չէղի էրկու ախպրագիր կէղի։ էն մեկն քիչ հարուստ կէղի, էն մեկ ախպեր՝ ֆուխարա կէղի։

Էրկսի կնիկ լէ էրկու խոդով կէղին։ Իտոնք աստծու հ՚առեչ բեշիքարթմա կէղին, որ մեկին ախչիկ էղի, տա էն մեկելի տղին։

Մնաց օր էդ հարուստի կնիկ պառկավ ախչիկ բերեց, աղքտի կնիկ պառկավ՝ տղա բերեց։

Ժամանակն էկավ, դացին հարուտի ախչիկ վերցին, դրին փաթթեցին, կնիկ կերցուցին, խմցուցին։ Քյասիբ մարդուն վո՞ն կաչքա. մարդ չգնաց։

Ելան աչքեցին տեսան օր էդ հարուստ մարդու ախչիկ գացեր ա աղքատ մարդու տղի մոտ։ Ինչքան կէրթան, կտեսնին մեկտեխ ին։

Էտոնք կասին. «էս ի՞նչ ա, աստծուց ա, խրիշտակ կէնա. մենք խաբար չինք»։

Կէրթան հարուստ մարդուն խաբար կիտան։

Ըսեց.— Ես չըմ ասվտա, ես էդ բան չընդունիմ օր աստծուց ա, բերեք դրեք իմ սենյակ։

Օր բերին դրին, լուսումթին հարուստ մարդ էլավ տեսավ օրտա տղեն ախչիկ ուր սենյակի մեջ մեկտեխ պառկուկ։

Իտոր էնպես ձի մի կա, ինչ օր տեսնա, փարալամիշ (պա-

տառ-պատառ) կէնա։ Թե՛ խավ էղի, թե՛ կատու էղի, թե՛ տա-վար էղի, թե՛ իսան էղի։

Կասա.— Օր աստծուց ա, էդ տղեն տարեք թալեք իմ ձիու օտներու հ՝առեշ։

Օր տղեն կթալեն ձիու օտներու մեջ, տղեն կելի ղրուց-աստծու խրամանքով ձիուն կասա.

— Ձի, ընձի ղայ մ՝էնի ես կմեծնամ, կելիմ քըղի էնպես կը-պախիմ, կէնիմ պատվերքի (պատկեր) պես։

Օր էդպես կասա, ձին ուր բերնով կբռնա, կխանա, կդնա մսուր։ Ձին կֆլըթրի, տղեն կլիղա, շուշի պես փելք կիտա։

Լուսումթին կէրթան կտեսնին՝ տղեն ձիու օտներուց խանուկ դրուկ մսուր, պտուղ-պտուղ քրտինք տվի վերեն։ Կէրթան հա-ռուստ մարդուն խաբար կիտան։

Կասա.— Ձին ի՞մալ բան չէրաց էտոր։ Բալքի աստծուց ա էդ բան։ Վերցե՛ք, տարեք լավ պայեք։

Կտանին, տղին էնպես կպային օր թագավորի տղու պես։ Կէղին մեկ ութ, տաս տարեկան տղեն լէ, ախչիկ լէ։

Հարուստ մարդ կասա.— Տարեք էրկուսն էլ թալեք վարժա-տուն, թրխ ուսում առնին։

Էնպես կուզա էրկսին լէ, օրմ՝օր չտեսի, չգինա ուր հալ ի՞մալ կէղի։

Տղեն շատ հ՝առեջ կէրթա։ Վարժապետ կասա.— «Այբ», տղեն կասա՝ «բեն»։ Հ՝մեն ուսումով լցվեր ա։

Վարժապետ խաբար կիտա, թե քու էրկու տղեն լէ ուսումով լցուկ ին, ընձի անկաջ չըն էնի։

Կասա.— Խերք ա մնան վարժատան մեջ, խանա բեր։

Էդ էրկուս օր սահաթ մի զիրար չտեսին, դինան օր աշխարհ ավիրավ։

Վարժատնեն էլան։ Հարուստ մարդ էրկուս միասին տարավ, ուր տուն պահեց։ Մեկտեխ կէրթան կօլորտին, ուրանց քեֆ կէնին,

Էն մեկ օր տղեկներ կէրթան կխաղան, մեկ մարդ մի կտեսի օր էդ էրկուս իրար կպագին։ Էն մարդն է կիգա, կըսա.

— Ես տեսա էրկու տղեք զիրար կպագեն, վըր իրարու կու-րախնեն։

Էն մարդ ըսեց.— Ի՞նչ քու բան ա, էդ էրկուս բեշիքարթմա ին։ Իտոնք դոր կէրթան, ձեռ վըր իրարու թևին, ուրախութեն կէ-

նին աշքարա, հ'մնու հ'առչև, գինան ախպեր-քուր ին,— Ըսավ,— չէղի, չէղի, էդ բաներ անգամ մի լէ խսա էնիս։

Մնաց. հ'իրկուն էդ հարուստ մարդ տեսավ, օր ուր դիվան մեկ ֆուխարա մարդ նստե էնտեխ։ Հ'օդեն խըռ էլան գացին, տեսան էդ ֆուխարա մարդ նստուկ էնտեխ։

Ըսեց.— Դու ի՞նչ մարդ իս, խո անոթի չի՞ս։

Ըսեց.— Անոթի իմ։ — Հաց բերին էդ մարդուն։

Ըսեց.— Դու ի՞նչ մարդ իս։

Ըսեց.— Վոլա, ես խեղճ, քյասիբ մարդմ'իմ։

Ըսեց.— Ապա դու ի՞նչ կօլորտիս։

Ըսեց.— Կօլորտիմ, նախրորդ էղեր իմ, հովիվ էղեր իմ։ Մեկ յան խովիվ բոնա ընձի, յան նախրորդ բոնա։

Ըսեց.— Դու չէղի՞ս ընձի խովիվ։

Ըսեց.— Կէղիմ։

Ըսեց.— Լուսուն արի իմ օխչրի հ'առեշ, քզի ինչ ուզիս, ես կիտամ օր իմ օխչար լավ պախեցիր։

Էղի էր, գնաց էտոր օխչրի հ'առեշ, էղավ խովիվ։

Տղի անուն Ֆարխիկ ա, նշանլուի անուն՝ Նազե. Նազեին քուրմ լէ կա՝ անուն Գոլե։

Ֆարխիկ, Գոլե ու Նազե մեկտեղ կէրթան բեր ու կիգան, ճամբախ ուրախութեն կէնին ուրանց։

Բեր օր կէրթան, կաթ Գոլե կշալկա, չղիմիշին տան Ֆարխիկի նշանլուի քամակ։ էն մեկ օր կրերա կաթ կգնա Նազեի քամակ, կստովմա (դիտմամբ) տսնանք Ֆարխիկ ձեն կենա՞։

Ֆարխիկ էն դհեն կիգա, կըսե.— Նազե, դու չկարնաս, տու ես կշալկիմ զկաթ։

Գոլեն կծիծղա.— Հ'որի՞,— կասա,— չուրի մկա ես կշալկենք, դու իմա՞լ չըր ասե, մկա կասիս։ Գոլե կըսա.— Տո՛ւր, տո՛ւր ես կշալկիմ, ես չըմ թորկի Ֆարխիկ շալկե։

Լախրդի էնելով, քեֆ էնելով կաթ տարան պապու տուն։ Դու մըսե, էդ խովիվ սիրտ ընկե Նազեն։

էն մեկ օր կէրթան բեր, կբերա ուր կոլավ (հովվի թաղիքե վերարկու) կգնա Նազե տեխ, օր նստի կոլվի վրեն, չնստի գետին։

Նազեն քֆրեց, կոլավ թալեց է՞... գնաց։ Կաթ կթեցին, Գոլեն շալկեց, էկան։

Հարուստ մարդն ըսեց.— Խովվուն կանչեք իգա։

Կանչեց էդ մարդն էկավ, ասեց.

— Խովի՛վ, ուզա՛ քու հախ, ես տամ։

Ըսեց.— Ես կուզիմ քու ախչիկներուց մեկն իտաս ընձի։

Ըսեց.— Դու վո՞ն կուզիս։

Ըսեց.— Ես Նազեն կուզիմ։

Օր ըսեց՝ «Ես Նազեն կուզիմ», չէ՞ Ֆարխիկի քեռին էնտեխ նստուկ ա, համա շատ զոռ մարդ ա, շատ ջիզրվավ, քաշեց ուր խանջալ ու էկավ օր զանա խովիվ սպանա։

Էդ հարուստ մարդ նեղեցավ Ֆարխիկի քեռու վրեն, ըսեց.

— Դուն թողներ, յան Նազեն կիտենք, կամ չի տենք, դու նոր ջիգրվեր, էլներ զաներ, ես եվ օր տենք։ Քու չան էլնի, զՖարխիկի նշանլուն պտի տամ խովվուն, գնա՛, ինչ գիտես, էրա։

Ֆարխիկի քեռին ուր մարդեր առավ էլավ հ՝օդից։

Ըսեց.— Թե դու մարդ իս՝ տու խովվուն, տես ես ի՞նչ կէնիմ քու գլոխ։

Ղանչեց խովվուն հարուստ մարդն, ըսեց.

— Ֆլան օր կառիս ֆլան խոչ կիգաս, օրտա մորթինք, խարսնիք բռնինք։

Համա քեռին ըռկե, գացեր ա։ Մնաց, էն մեկել օր Ֆարխկի նշանլուն ու Դոլեն էլման գացին բեր։ Էլի հ՝առջի պես թև թալած իրարու վերեն, քեֆ ուրախութենով կէրթան։

Խովիվ տեսավ օր ուր նշանլուն ու Ֆարխիկ զիրար կպադին, կուրախնան իրարու վրեն։

Խովիվ մեկ կոսլալ մի կզարկա Ֆարխիկին։

Կըսա.— Դու իմ նշանլուն կպագի՞ս։

Ֆարխիկի հ՝ուշք էնտեխ հ՝ընցավ։ Դոլեն, Նազեն թափան խոզվու վերեն, զարկեցին։

Ջուր լցին Ֆարխիկի գլխի վրեն, խելք էկավ գլոխ։ Շալկեցին զուրանց կաթ, էկան։

Խոսք խասկցուցին Ֆարխիկի քեռուն. «Խովիվ կոպլով զարկեր ա, Ֆարխիկի հ՝ուշք հ՝ընցեր ա»։

Էդ հարուստ մարդու անուն լէ (նոր ընկավ միտս) Ադի կէղի։

Քեռին ըսեց.— Էդի խովիվ չզարկեր ա, Ադին ա զարկեր, վնաս չունի։ Իմն ու Ադուն ու խովվուն մնա, ժամանակ կա մեշ։

Ադին ճամբեց, խովվուն կանչեց էկավ։

Խովիվ խաչ առեց էկավ, օր խարսնիք էնին, Նազեն ու խովիվ պսակեն։ Ձեն գնաց Ֆարխիկի քեռուն։

Քեռին չորս մարդ ճամբեց հ՝առջև խովվուն։

Ըսեց.— Գացե՛ք, զխովիվ մորթեք։

Գացին, խովվու հ՚առեջ բռնեցին, տեսան օր խովիվ առեր ա խոշ մի ու կիղա ուրախ-ուրախ։

Բռնեցին զէդ խովիվ, մորթեցին, ջարդեցին, մանդրեցին բերին լցին շվներ, բարձան իշու վրեն ու քշեցին բերեցին։ Օլախն դեմ թ՚էրթա Ադո տուն։

Տեսան օր օլախ (դրաստ) բարցուկ էկավ, խովիվ չկա խետ։ Բեռ իշուցին, բերեցին, տեսան օր խովիվ մորթած ա, շանդակ մըջ բեռան։

Խաբար տարան Ադիին։ Ադին ըսաց.

— Կա ու չկա Ֆարխիկի քեռու բաներն ա, իմ ու քեռուն թըխ կենա։

Ճամբեց քեռուն, ըսեց.— Ըդի քու բաներն ա, դու իմ գլուխ էրեցիր։

Էդ էրկուս էղան իրարու դուշման, ամա չիշխնա կպի քեռին։

Քեռին ըսեց.— Մեկ խովվի սպանելով չմնա, յան իմ քոք պտի գա, յան էնոր քոք պտի գա։

Ադին լսեց, խռըլ-գրռըլ ինկավ։ Հ՚իրար, խոսք խոսք հ՚ընցավ, քեռին ու Ադին զարկին իրարու։

Իրարուց մեկ հ՚իսուն, վաթսուն մարդ սպանեցին, համա քեռու դին զոռ ա։ Կռվան։ Մեկ քիչ ժամանակ մի հ՚ընցավ։

Ֆարխիկ կանավ, ըսեց.— Ես շիվարեր իմ, մացեր իմ, էն դին մարդ սպանվի, իմ խորոխպերն ա, էն դին սպանվի՝ իմ քեռին ա։ Ես չգինամ ի՞մալ էնիմ։

Սուս ու փուս էղիր էր։ Ադին ըսեց.— Կանչինք Ֆարխիկ բերինք տուն, դակով (պատրվակ) սպանինք։

Ամա Ֆարխիկ իմացուն ա, գինա գետնի տակ ի՞նչ կէղի։ Տեսավ օր էրկու մարդ էկան, ըսին.

— Ֆարխիկ, քու խորոխպեր քզի կղանչա։

Ըսեց. «Ախպեր, էդի իմ խորոխպերն ա, էրթամ, գինամ, օղիաթ պտի խաղա իմ գլուխ, չէրթա՞մ խորոխպեր ա, կէրթամ»։

Ուտոնք լէ շեման տակ քառսուն գաղական խոր փորած ա, օր Ֆարխիկ հ՚իգա, պատի մըջ խորուն, խոզ տան վերա։

Ֆարխիկ գնաց, ոտ դրեց խորի կուշտ ու կուշտ, հ՚ընցավ գնաց ներս։ Բերեցին օր խաց ուտին։ Ֆարխիկ բանզհար (դեղթափ) մատնիկով խառնեց կերակուր ու կերավ։

Էլավ, էլի գնաց Նազեի մոտ, ուրանց քեֆ ուրախութեն կէ-նին։ Քիչ մնաց, խաթըր առավ Գոլե մոտեն, Նազե մոտեն։

Ըսե՛ց.— Գինամ, ձըր պապ բեբախտ ա, կուզա ընձի կորցու։

Գնաց, ամա էտոնց սրտեր իբարուց չկտրի, մեկ օր օր չտես-նին իրար ըդ իրեք, կմեռնին։

Էլավ գնաց քեռու մոտ, ըսավ.

— Իմ խորոխպեր ընձի կանչեր տարեր, իմ գլուխ հըմլա բա մի կուզեր էներ։

Քեռին ըսեց.— Դու հ՛որի՞ պտի էրթաս։ Օր մի զայ պտի էլնիս։

Ժամանակ մ՚ընցավ էլի ղանչեցին Ֆարխիկ, առան գացին։

Գոլեն ու Նազեն իմացան, թե Ֆարխիկ պտի սպանին։ Բերե-ցին իրեք ճան, մեկ սև, մեկ սիվտակ, մեկ լէ կարմիր, զարկեցին դռան դրնդին, օր Ֆարխիկ իգա տեսնի՝ թե խելք ունի, իմանա։

Ֆարխիկ էկավ, պտի մտներ ներս, աչք քիսավ դրնդին. «Օհո՛,— ըսաց,— բան բդլեր ա։ Վոլա՛, էդի Նազեն ու Գոլեն ա էրած։ Ինա սիվտակ՝ իմ պատանքն ա, էն կարմիր լէ՝ իմ արուն ա, էն սև լէ՝ Նազեն ա՝ սև թալի գլխունա։ Էդ տեխեն դարձավ, ըսավ՝ «Ես չըմ հ՚իգա, ու չըմ հ՚իգա»։

Դարձավ էլի քեռու մոտ, ըսավ.— Ըմալ փա մի տեսա,— ըսավ,— ես մնամ հ՚ոգա մեկ ըդոր կողմեն սպանվի՝ իմ խորոխ-պերն ա, մեկ քու կողմեն սպանվի՝ իմ քեռին ես. ընձի հրաման տուր, ես կէրթամ։

Էլ խորոխպոր տուն չէրթա։

Ըսեց.— Դու հո՞ւր կէրթաս։

Ըսեց.— Ես կէրթամ իմ մեկել քեռու մոտ։

Ըսեց.— Գնա, աստված քզի խետ էղի։

Էլավ, ղանչեց ուր աստված, ընկավ ճամբախ։ Շատ գնաց. քիչ գնաց, աստված դինա, մեկ եռսուն-քառսուն օր գնաց, քեռու քաղքին մոտեցավ։

Մեկ էդոր քեռուն ըսեց.— Պայա (հետիոտն) մի կիգա։

Քեռին ըսեց.— Տղեկներ, ելեք աչքեք՝ էն ի՞նչ մարդ ա կիգա։ Ես երազ իմ տեսի, կարելի ա իմ խարզեն ա։

Նա Ֆարխիկ քեռին ա տեսի, նա քեռին Ֆարխիկն ա տեսի, ճանաչ չին։

Քեռին ըսեց.— Էդի մեր խարզեն ա, իմաստուն ա, ինչ գոր-տուկ բան էղի, գինա։

Տղեն էկավ տեսավ օր էղա դիվան կան հարիր մարդ լցուկ։ էկավ, բարև տվեց էդ դիվնին։

Ըսեց.— Բարի օր ձրզի։

Մեկ բարև չառավ։ Հ'ինք բարև առավ։

Ըսեց.— Աստծու խեր ու բարին քզի, Մարզումանի խարզեն։

Դարձավ ուտուսվար բարև տվեց՝ չառան։

Էլի հ'ինք ուր բարև ուտուսվար առավ։

Դարձավ թուրքերեն բարև տվեց։ Ինչ լեզու զրուցեց, բարև չառավ։ Ինք ուր բարևն առավ։

Դարձավ ըսեց.— Էնա մեշտեղաց իմ քեռու տղեն ա, էն մեկ կշտին լէ էն մեկել տղեն ա, իմ քեռու անուն Մարզուման ա, թե չավտաք, էնոր մեկ թև կտրուկ ա։

Բացեց, ըսեց.— Իմ թև աչքեք։

Տեսան օր թև մի չունի։ Ըսաց.

— Դու դինե՞ք օր ընձի թև մի կա՞, յան չկա։ Իմ խարզեն իմաստուն ա, ինչ ասես՝ գինա, դուք չհավատեք։

Մարդիկ ըսեցին.— Մենք չհավանք էղ բան։ Կեղի օր ուրիշ մարդ թարիֆ էրեր է էտոր։

Ըսեց.— Կանի մեկ շրբինք (փորձենք) զէդ մարդ ուրիշ բանով։

Բերին բամբակ դրին կոլվի տակ, նստան վրեն. հ'ինք ելի դուս։

Ըսեցին.— Թե հ'իմցավ՝ իմաստուն ա, թե չհ'իմցավ՝ գլուխ կզարկինք, հարամզադա յա։

Ղանչեցին բերեցին, ըսեց.— Իմ քեռու հ'օդեն՝ իմ քեռուց պրծի, հ'մեն էլին, ինչքան ա գզած, ինչքան ճերմակ ա (մարդ չխոսա) կդառնա, ինք ուրին կասա. «Հ'որի՞ չըս ասի բամբակ ա»։

Քեռին ըսեց.— Իմա՞լ ա։

Չավատացին, ըսեցին.— Կարելի ա իմացեր ա։

Բերեցին չանախ մի խրիսա դրեցին կոլվի տակ, ծածկեցին հ'ինք, գացին դուս։

Դարձավ աչքեց, ըսեց.— Օ՜, ինչքա՜ն ա ծեծած, հորի՞ չասես խրիսա յա։

Ի՞նչ լցեցին կոլվի տակ, մանդր մրխ, նալ, հ'իմցավ, ախր իմաստուն էր։ Քեռին տեսավ օր ուր խարզեն էր, էնպես հազ էրաց (ախորժեց) մոտեն՝ օր կուզեր ուր խոգու մեջ դներ։

Ըսեց.— Դու, իմ տղեն քացեք ավուղուշ էրեք։

Էն մեկ օր Մարզուման ըսեց.— Դոր կէրթաք, գացեք, էնա

մեկ սար մ՚էրթաք։ Սև սարն ա, վոն օր էրթա էնտեխ, դառնալ չէղեր ա։

Ըսեցին.— Ջընք էրթա էն սար, է՚ է՚, ուրիշ սար ու քար կէրթանք նեճիր կէնինք։

Ֆարխիկ ըն մեկ օր ըսեց.— Ես պտի էրթամ էն սար, տեսնիմ ի՞նչ կա։

Էլավ գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, տեսավ էն մեկ քարեն խազալ մի թռավ։ Տվեց խազալի հ՚ետև։ Նա կեռնա խազալ պրծի, նա կեռնա խազալ բռնա։ Խազալ գնաց, զինք թալեց տուն մի։ Դու մըսեր՝ խազալ կնկա մի խազալն ա։

Կնիկ էլավ ըսեց.— Ֆարխիկ, դո՞ւ իս իմ խազալ լարեր իս։ Կնկա անուն լէ Գոլե կէղի։

Ըսեց.— Գոլե, ե՛ս իմ։

Ըսեց.— Ֆարխիկ, դու չէղեր էր, ուրիշ էր էղե մկա կտոր-կտոր էրեր ենք, ամա ես քզի ձեն չըմ էնի, դէ՚ էջի արի։

Իջավ գնաց Գոլե մոտ։ Գոլե աչք քիսավ Ֆարխկին, շատ ուրախցան իրարու վրեն։

Գոլե ըսեց.— Ես ու դու իրիկ կնիկ, կառիմ ղքզի։

Ֆարխիկ ըսեց.— Ես ղաբուլ կէնիմ։ Ես կէրթամ իմ քեռու մոտ, տեսնիմ ի՞նչ կըսա, կդառնամ կիգամ։

Ֆարխիկ իրեք օր մնաց էնտեխ, դարձավ գնաց ուր քեռու մոտ։ Քեռին շատ իտոր վրեն չիգրվավ, ըսավ.

— Ես իդա իրեք օր զախն էր մեռնենք, էդ ի՞նչ պատահավ քըզի, դու չէկար։

— Ապա,— ըսեց,— ես գացի ֆլան սար, օր դու ասիր մէրթա էն սար։ Գացի խազալ մի տեսա, ընկա խազալի հ՚ետև, զինք թալեց մեկ տուն։ Տեսա մեկ կնիկ էլավ, ընձի ճանչցավ, ըսեց. «Ֆարխիկ, դո՞ւ իս, տվեր իս իմ խազալի հ՚ետև». ես լէ ըսի՝ «Գոլե, դո՞ւ իս, չըս թորկե մարդ իդա էդտեխ»։ Դարձավ ըսեց՝ «Ես ու դու առինք զիրար»։ Մկա դու դինաս, առնի՞մ, թե չառնիմ։

Քեռին ըսեց.— Քու կամքն ա, կառի՞ս, չառի՞ս։

Ըսեց.— Օր հըմլա ա, ես զէն կառիմ, կէրթամ Գոլե տուն, էլման մենք քեռի խորզա ինք։

Դարձավ գնաց Գոլե մոտ։ Միասին մեկտեխ ապրան ժամանակ մի։

Էն մեկ օր Ֆարխիկ ըսեց.— Ելիմ, էրթամ սարեր, ընձի համար օլորտիմ, նեղեցուկ իմ։

Ըսեց.— Դու մարթ իս, գնա քու քեֆի համար, ղոր կուզիս օլորտի, արի։

Էլավ բարձր սարեր, աչքեց, ինչ աչքեց, Նազե ընկավ միտք. «Հա՜յ վախ,— ըսեց,— էսքան ժամանակ ես էլեր իմ, էկեր իմ, սկի չասիմ նշանլու կա ընձի, պապու գեղ կա ընձի»։ Շատ մառախ էրաց օր էլավ էկավ Գոլե մոտ։

Գոլեն ըսեց.— Դու հ'որի՞ քու ռանգ թալեր իս, դու իմա՞լ էղեր իս հ'էսօր։ Սաղ խոսք ընձի ըսա, թը քզի մարդ ռաստ էկե, ընձի ըսա։ Թը չէ՜, էլիմ բոռամ՝ սար ձոր խալի իմ հ'առեջ։ Ես Գոլեն իմ։

Ըսեց.— Դու սաղ կենաս, ընձի մարդ ռաստ չէկե։ Ես էլա սարի գլուխ, իմ նշանլու Նազեն իմ միտ ընկավ, ես շատ մառախոտա։

Ըսեց.— Օր քզի նշանլու կա ընտեխ, հ'որի՞ ընձի շուտով չըսեցիր։

Ըսեց.— Ըպա ի՞նչ ըսիմ քզի, նամակ տարող բերող չկա։

Ըսեց.— Գելիմ առավոտուն, նամակ ղրկիմ էրթա։

Լուսումթին Գոլեն էլավ դուս։ Էլավ բոռաց խավքերուն. ինչ օր խավք կեր, հ'մեն էկան, էկավ հ'առեջ. Տրյրե Շիմբը։

Գոլե ըսեց.— Տրյրե Շիմբը, պտի էսա նամակ առնիս էրթաս Ֆարխիկի Նազեին։

Տրյրե Շիմբը էկավ, ըսեց,— Ես կվախենամ, չըմ իշխնա տանի էդ նամակ։

Ըսեց.— Էսա նամակ կառնիս, կէրթաս. կիգա քու հ'առեջ Տրյրե Ըշխկարա։ Օր ըսեցիր էսի բրինդար Ֆարխիկի թուխթն ա, սիրտ բրինդար ա, էլ քզի ձեն չէնին։ Կէրթաս, էն դհեն կիգա Տրյրե Կոռին (խուլ թռչուն), դու լէ ըսա. «Սրտեն բրինդար Ֆարխիկի թուխթն ա»։ Կառիս կընցնիս կէրթաս, էլ մարդ ձեն չէնա։ Կէրթաս բաղի մեջ, էրկու ախչիկ նստուկ ին, էդ էրկու ախչկան մոտեն ո՜ր մեկ օր սև ա կապե դլխուն, նամակ ուրին հ'առեջ կթալիս։

Էտիկ կառի նամակ, կէրթա, կտեսի էրկու ախչիկ էդ բաղի մեջ նստուկ ին։ Նազեն կաչքա հավք մի, հա՜ կիգա, հա՜ կէրթա։ Նազեն կիմանա, կըսա.

— Քուր, թող հ'իդա, վոլա էդի Ֆարխիկի թուխթն ա բերե։

Խավք թուխթ կթալա Նազեի հ'առեջ։ Կառի կարդա, տեխբրտեխ դրուկ ա. «Ես ֆլան տեխն իմ»։ Ախչիկն ա, էնտեխ շատ

կմառախոտի, շա՜տ կիլա։ «Հե՜յ վախ,— կըսա,— չուր մկա Ֆարխիկի նամակ վըր մե չէկեր էր, մկա տեսաս։ Կելի կէրթա Նազեն ուր պապու մոտ։

Պապուն կըսա.— Հ՛էսօր Ֆարխիկի նամակ առեր իմ։

Պապն ա կըսա.— Դու ախչիկմ իս, չկրնաս էրթաս։

Ախչիկ կըսա.— Ախր շարա չկա, ընձի ասպար տուր, ես պտի էրթամ, հասնիմ Ֆարխիկին։

Գելի պապն ա, մեկ էրկու խարիր ձիավոր դնա խետ ախչրկան։ Ձիավորներով կընկնա ուր Ճամբախ։

Մենք դառնանք Ֆարխիկի վրեն։

Մե ժամանակ կմնա, Ֆարխիկ կհ՛իմանա թը ուր նշանալուն էկավ։ Նազեն կիգա կմոտենա, իրեք սհաթվան Ճամբախ օր կմնա, շադրներ կգանա, կմնա գիշեր էնտեխ։

Հ՛իրկուն ա, Ֆարխիկ կհ՛իմնա օր թե ուր նշանլուն մոտեցեր ա, էկեր ա ֆլան տեխ։

Կէրթա Գոլեին կըսա.— Գոլե՛, ընձի իգին տաս, ես էրթամ ֆլան տեխ, քարվան էկեր ա։

Կըսա.— Կէրթաս ի՞նչ։

Կըսա.— Կէրթամ, գոզութենն, բան կգողնամ, մալ կգողնամ, կառնիմ իգամ։

Էլ չասա իմ նշանլուն էկեր ա։

Կըսա.— Դու հ՛որի՞ կէրթաս գողութենի խամար, իմ ի՞նչն ա պակաս։ Կէրթաս, գնա, քու քեֆն ա, ես չըմ ըսի մ՛էրթա։

Ֆարխիկ կէրթա ուր նշանլու մոտ, կտեսնի էդտեխ շատ կուրախնան էրկուս իրարու վրեն։

Ֆարխիկ կըսա.— Նազե, ես չըմ դինա դու կնի՞կ իս, թե ախչիկ իս։

Նազեն էդտեխ շատ կմառախոտի, կքրբոտի, ուր մարգերուն կըսա։

— Էլեք, բարցեք ու էրթանք, էսա ժամանակ էլ մարդու բախտ չկա։

Էդի բարցավ էկավ, վավելեր, դու ընձի ըսիս՝ «Դու կնի՞կ իս, թե՞ ախչիկ իս»։ Էկավ խասավ ուր տան մեշ, համա մեռավ քրբու։

Դառնանք Ֆարխիկա վրեն։ Ֆարխիկն էր ըսաց. «Ես ի՞նչ էրեցի իմ գլուխս»։

Դարձավ ըսեց.— Գոլե՛, քու խաց ու շուր ընձի խալալ էրա։

Ես կէրթամ, թե սաղ մանցի, էլի կդառնամ, թե սաղ չմանցի, դո՛ւ դինաս։

Գոլէ մոտեն ուր խաթրն առավ, ղանչեց ուր աստված, ընկավ ճամբախ։ Շա՛տ, քիչ՝ աստված դինա, էկավ ուր պապու քաղաք էլավ դուս։ Տեսավ օր էրեխեք, ճժեր ճան կխաղան։ Ուզեց օր էրթեր ճան առներ ճժերու մոտեն։

Տղեկներ ըսեցին.— Աստված քու տուն ավիրա, գնա՛ Նազե տուն, Նազե մեռեր ա, էնքա՞ն ճան առ քզի բեր խաղա, պապ էնքա՞ն մատաղ էրեր ա։

Էնպես օր ըսեցին, Ֆարխիկն էր խալիվորցավ, սըվտկավ, էլավ մը ծեր մարդ։ Քրրոտավ, մառախոտավ, ըսեց.

— Գյալո, Նազե գերեզման ի՞նչ տեխն ա։

Ըսեց.— է՛, հան թըժա գերեզման, նոր փորած ա։

Գնաց Նազե գերեզմնի վրեն։ Լաց, ողբաց, խող տվեց վըր ուր գլխուն քրբու (կսկծից)։

Նազեն սաղցավ գերեզմնեն էլավ, փաթթվան հ'իրար, զիրար զրկեցին։

Ջուաբ տվեցին Նազե պապուն, օրթը չըսես՝ «Ֆարխիկ էկեր ա, հանդա Նազե գերեզմնի վերեն ա։ Նազեն սաղցեր, փաթթված ա հ'իրար»։

Ջուաբ տվեցին քեռուն, իտոր պապուն, քեռին ու պապ ու մամ։ Գեղացին, միասին էկան էտոնց տեսութեն։ Էկան տեսան էրկուս լէ փաթթված իրար, կուրախնան վըր իրարու։

Ադին օր էկավ էդ տեխ, Նազե աչք օր քիսավ պապուն, Ֆարխիկի աչք օր քիսավ Ադին, էրկուս լէ էղ տեխ մեռան, մուրազ իրար չիասան։

Նոր Ադին զարկեց ուր գլխուն, իլաց, ըսեց.— Հեյ վա՞խ, էտի աստծուց էր, ես բլուցի իմ ձեռնով, իմ տուն ավրեցի, չը թողի ըդ էրկուս իրարու մուրազին խասնեն։

Նոր բերեցին էրկուսի տապան մեկտեղ փորեցին, փառքով, պատվով թաղեցին։